ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԲԵԼՄԵՏ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/37 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Պատրաստված է թուջե ձուլվածքից և երկաթից: Հիմքը՝ (Նկար 2, 1.1) թուջե ձուլվածք, բարձրությունը՝ 800մմ, որի մեջ ամրանում է Փ102մմ խողովակ՝ 3մմ պատի հաստությամբ: Ընդհանուր բարձրությունը (Նկար 2, 1.2.) 5 թևի դեպքում 3750մմ: 2200մմ բարձրության վրա թուջե ձուլվածք՝ (Նկար 2, 1.3.) 150x150x150մմ քառանկյուն խորանարդ, որի վրա ամրանում է Երևանի զինանշանը Փ90մմ տրամագծով: Ցուցանակի թևերի երկարությունը (Նկար 2, 1.4.) 950մմ և 700մմ՝ ըստ պատվիրատուի պահանջի: Ցուցանակի թևերի լայնությունը 220մմ: Ցուցանակի թևերի եզրերը պետք է լինի քառանկյուն խողովակով պատրաստված շրջանակից՝ 15x15մմ մետաղական խողովակով: Ցուցանակի թևերը հավաքվում են Փ89մմ մետաղական խողովակի վրա և թևերի միջև հեռավորությունը պետք է լինի 5-15մմ: Վերևի հատվածում նույնպես 150x150x150մմ քառանկյուն խորանարդ (Նկար 2, 1.5.), որի վրա ամրանում է Երևանի զինանշանը՝ Փ90մմ տրամագծով և (Նկար 2, 1.6.) թուջե գագաթ 150մմ բարձրությամբ: Ցուցանակի յուրաքանչյուր թև պետք է պտտվի 360 աստիճանով Փ89մմ խողովակի առանցքի շուրջ և ամրանա ցանկացած դիրքում: Ցուցանակի թևերը (Գծագիր 2, 2.1.) Փ89մմ խողովակի վրա հագնում է թուջե ուղղորդիչով ((втулка)Գծագիր , 2.2.) ՝ թևի ուղղահայացությունը ապահովելու համար: Թևի թիթեղի հաստությունը 1.5մմ: Թևերի գրվածքի տառատեսակը (Նկար 3 , 2.3.) Dallak Time և Dallak Time Armenia: Գրվածքը պետք է լինի Հայերեն և Անգլերեն՝ միաժամանակ յուրաքանչյուր կողմում, վերևից՝ Հայերեն, իսկ ներքևում՝ Անգլերեն: Գրվածքը պատրաստվում է ինքնակպչուն թաղանթի վրա՝ տպագրության միջոցով (գունային համադրությունը՝ ըստ պատվիրատուի պահանջի) և պետք է լինի դիմացկուն եղանակային պայմաններին: Ցուցանակի հետ

	պատրաստվում է նաև մետաղական կոնստրուկցիա (գծագիր) (закладной) բետոնացման համար, որի վրա ամրանում է Ցուցանակը: Ցուցանակը թուջե հիմքը և բոլոր դետալները պետք է համապատասխանի նկարում պատկերվածի հետ: Ցուցանակը պետք է պատրաստվի նոր հումքով և փոշեներկված՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ: Ցուցանակների տեղափոխումը և տեղադրումը, ըստ պատվիրատուի կողմից ներկայացված հասցեների, կատարում է մատակարարը՝ առավելագույնը 21 օրացույցային օրվա ընթացքում տեղադրելով նվազագույնը 15 հատ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО БЕЛМЕТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊԶՔ-26/37 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	